

ՆԱԻՐԱ ԻԼՅԱՅԻ ԹԱՄԱՄՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու
(Աթենք)*

nairatamamyan@gmail.com

ORCID ID: 0009-0006-0080-9872

DOI: 10.54503/978-5-8080-1557-9-34

ԿԱՆԱՆՑ ԿԵՐՊԱՐԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ԺԱ-ԺԴ ԴԴ.)

Բանալի բառեր՝ առաջնային մոդել, միջնադար, եվրոպական գրականություն, գենդերային կարծրաբանություն, արքեոլոգիա, Աստվածամայր, Բեատրիչե:

Ներածություն

Հայ գրականությունը միջնադարում՝ հատկապես ժԱ-ԺԴ դարերի միջև ընկած ժամանակահատվածում, հանգամանքների բերումով զարգանում էր հատկապես երկու կենտրոնում՝ Կիլիկյան Հայոց թագավորությունում և բուն Հայաստանում: Եվրոպայում տեղի ունեցող քաղաքական, սոցիալական իրադարձությունները իրենց ազդեցությունն էին թողնում Հայաստանի հասարակական կյանքի վրա և հակառակը. մասնավորապես Խաչակիրների արշավանքները, որոնց հետ առնչվում էր Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականությունը, մասնակիցների միջոցով Եվրոպա էին ներմուծում հայաստանյան և ընդհանրապես արևելյան մշակութային փորձը: Ահա այս շրջանի գրականությունը, բնականաբար, այդ գործընթացի մաս էր, որ տարբեր մոդելային համակարգերով արտացոլում էր իրականությունը: Այդ նախնական կամ առաջնային մոդելային համակարգերը՝ արքեոլոգիայի,¹ իրենց հերթին պատկերանում էին տարբեր կերպարներով: Սույն հոդվածի շրջանակներում մեզ հետաքրքրում են կանանց կերպարային դրսևորումները, որոնք հայելում են ժամանակի մշակութային, սոցիալական,

¹ Արքեոլոգիա և հատկապես մոր արքեոլոգիա մասին մանրամասն տե՛ս **Юнг К.,** Архетипы и коллективное бессознательное, перев. Чечина А.А., М., изд.-во «АСТ», 2023, 224 с.

հասարակական և բարոյական նորմերը: Թեև հայ միջնադարյան (ինչպես նաև համաշխարհային) գրականությունը հիմնականում հայրիշխանության արտապատկերում է, այսուամենայնիվ կան կանանց ուշագրավ ներկայացումներ՝ որպես հզոր կերպարներ, առաքինության և բարեպաշտության խորհրդանիշ սրբեր, ազատ վարքի տեր, մեղսագործ, բայց ի վերջո զղջացող կանայք, ամուսիններ, մայրեր և այլն: Հարկ է նշել, որ այս ուսումնասիրության նյութ ենք դարձրել միայն, այսպես կոչված, պաշտոնական գրականությունը անհատական ստեղծագործություններով՝ եվրոպական և հայկական բանահյուսական նմուշների քննությունը թողնելով հետագային, քանի որ նյութը իսկապես մեծածավալ է և մի հոդվածի սահմաններում զետեղելի չէ: Չենք անդրադարձել ասպետական վեպերին, բացառությամբ ԺԳ դարի հայտնի «Վարդի սիրավեպի» (Le Roman de la Rose)², որի ուղղակի և անուղղակի ազդեցությունն այնքան մեծ է հետագա գրականության վրա, որ հասնում է մինչև Ի դար. ինչպես, օրինակ, Ումբերտո Էկոյի «Վարդի անունը» վեպը³: Հայ իրականության մեջ ասպետական վեպեր չեն ստեղծվել (համենայն դեպս այդ մասին վկայություն չունենք), դա բացատրվում է համապատասխան պատմական պարադիգմայի բացակայությամբ: Սակայն աշխարհիկ քաղաքային սյուժեով գեղարվեստական ստեղծագործությունների կարելի է հանդիպել բանահյուսական ժանրերում:

Հոդվածի նպատակն է համադրման-զուգահեռման, վերլուծության-քննության, խմբավորման մեթոդներով ցույց տալ հայ և եվրոպական գրականության մեջ կանանց կերպարների ընդհանրություններն ու առանձնահատկությունները, դրանց զարգացման բազմազանությունը, միջարքետիպային անցումները:

Կանանց կերպարների խմբավորումը ըստ առաջնային մոդելային համակարգերի

Որպես կանոն, գրականության մեջ հիմնական թեմատիկ մոտիվների արծարծումը որոշվում է կենտրոնական կամ առաջնային մոտիվով՝ արքետիպով, ինչպես արդեն վերն ակնարկվեց: Այդ կենտրո-

² Гильом де Лоррис, Жан де Мён, Роман о Розе, перевод и комментарии И.Б. Смирновой, М., изд.-во «Героика и Спорт», 2007, 288 с.

³ Эко У., Имя Розы, перевод Елены Костюкович, М., изд.-во «Corpus», 2022, 480 с.

նային մոտիվը բխում է միջնադարյան հասարակության մեջ կնոջ բնության ըմբռնման ձևից: Ըստ այսմ՝ կանանց կերպարները կարելի է պայմանականորեն հետևյալ կերպ խմբավորել՝ ելակետ ունենալով դրանց հիմնական արքետիպերի դասակարգումը:

Կույս. այս արքետիպը՝ որպես բարոյականության կողմնորոշիչ և առաքինության մոդել, ներկայանում է մաքրությունը, ողջամտությունը մարմնավորող կերպարներով, ինչպես Մարիամ Աստվածածնի կամ Դանտեի⁴ (1265–1321) «Աստվածային կատակերգության»⁵ գլխավոր, կենտրոնական հերոսուհի Բեատրիչեի կամ սրբուհիների կերպարները տարբեր կրոնական տեքստերում:

Մայր. այս արքետիպը ներառում է սնուցող կերպարներ, որոնք մարմնավորում են պտղաբերություն և հոգատարություն: Թեև միջնադարում այս մոդելի ամենաշատ տարածում գտած կերպարը, բնականաբար, Աստվածամայրն է, այսուամենայնիվ գրականությունը մեզ մատուցում է նաև կերպարային այլ դրսևորումներ, ինչպես, ասենք, այրի կինը Վարդան Այգեկցու (ԺԲ դ.վերջ – 1250) «Այրի կին և որդի»⁶ առակում, ուր ցույց է տրվում մոր դերի կարևորությունը սերնդի դաստիարակության հարցում:

Հավատարիմ կին ամուսին. այս կերպարները հիմնականում ներկայացնում են հավատարմություն և համբերություն: Այս կանայք փորձություններին դիմանում են հանուն իրենց ամուսինների և ընտանիքների՝ արտացոլելով հավատարմության և զոհաբերության իդեալները: Այս մոդելի կերպարներն են ազնվական, արքայական տոհմի կանայք պատմագրական երկերում, ասպետական վեպերում:

Իմաստուն կին. գիտելիքներով հարուստ կերպարներ են, որոնց երբեմն տեսնում ենք բժշկության կամ մոգության մեջ, օրինակ՝ հեքիմները կամ կախարդները: Նրանք պատկերանում են հարգված կամ զարհուրեցնող կերպարներով, որ տատանվում են հասարակության հիացումի և անվստահության միջև: Իմաստուն են այրի կանայք հայ

⁴ Այժմ առավել ընդունված և նախընտրելի է գրության **Դանթե** ձևը: Հոդվածում գործածվող **Դանտե** տարբերակը հեղինակը գործածում է ըստ իր հղած գրքի տառադարձության(Տես՝ հղում № 71) :

⁵ **Դանտե Ա.**, Աստվածային կատակերգություն, թարգմ. Արքուն Տայան, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1983, 600 էջ:

⁶ Հատընտիր առակք **Վարդանայ Վարդապետի**, Choix de Fables de Vartan, en arménien et en français, Paris, Imprimerie de Dondey-Dupre, 1825, p. 73.

միջնադարյան առակներում, ինչպես, ասենք, «Իշխանը և այրի կինը» առակում⁷:

Հերոսական, հայրենասեր կին.⁸ այս մոդելը ներկայանում է էպիկական պատումներում, զրույցներում կին մարտիկների կերպարներով, որոնք մարտահրավեր են նետում ավանդական գենդերային դերերին: Նրանք մարմնավորում են քաջություն և ուժ՝ հաճախ առնական գծեր ձեռք բերելով պատվի կամ արդարության ծգտման մեջ: Հայ գրականության մեջ այսպիսի կերպար է Այծյամ կամ Այծեմնիկ անունով հերոս կինը, որ 1126 թ. մասնակցել է Անիի ինքնապաշտպանական մարտերին. «Եւ յայսմ պատերազմի առաքինացաւ կին մի ի վերայ պարսպացս, **առնացի** (ընդգծումը մերն է – Ն.Թ.) ստացեալ սիրտ հալածականս առնէր քարամբք զմարտուցեալսն, յելանել ընդ պատուարն՝ առ ոչինչ համարեալ զխոցուածս նետիցն, զոր վիրաւորէին արտաքուստ, եւ էր անուն նորա ըստ արժանի արագութեան նորա, Այծեամն կոչեցեալ»⁹:

Տրիքսպեր/խորամանկող. որոշ պատմություններ ներկայացնում են կանանց, ովքեր խելք ու խորամանկություն են գործադրում հայրիշխանական կառույցներում կողմնորոշվելու համար, հաճախ վիճարկում են դրանց հեղինակությունը կամ հասարակական նորմերը, ինչպես երևում է բանահյուսության որոշ ժանրերի և հեքիաթների մեջ: Վարդան Այգեկցու «Գող քահանան և այրի կինը» առակի հերոսուհին այլ ելք չի տեսնում ճշմարտությունը երևան հանելու, քան հնարամիտ խաբեությունը¹⁰:

Մեղավոր կին. այս արքետիպը ներկայանում է ազատ վարքի տեր, անառակ, ընդունված նորմերին ընդդիմացող, հաճախ զղջացող կամ պատիժ կրող, ներում ստացած կանանց կերպարները: Աստվածաշնչում և դրանից ազդված հետագա ստեղծագործություններում

⁷ **Ոսկեփորիկ.** նմուշներ հին և միջնադարյան արձակից, կազմեցին՝ Ա. Մադոյան և Վ. Ներսիսյան, Եր., «Սովետական գրող» հրատ., 1977, էջ 122:

⁸ Հերոսական կանանց կերպարներին նվիրված առանձին հոդված ունի Հ. Մոքոյանը. տե՛ս **Մոքոյան. Հ.**, Հայրենասեր կնոջ կերպարը հայոց պատմության էջերում.- «Պատմա-բանասիրական հանդես», 2004, № 3, էջ 118:

⁹ **Սամուէլ Անեցի և շարունակողներ.** Ժամանակագրութիւն. Ադամից մինչև 1776 թ., աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Եր., «Նաիրի» հրատ., 2014, էջ 207, տես նաև ուսումնասիրողի ծնթ. 327, էջ 405:

¹⁰ Ոսկեփորիկ, էջ 135:

առաջին այդպիսի կինը Եվան է, որը ոչ միայն ինքն է մեղսագործում, այլև սադրում է տղամարդուն, դրանով ավելի է սաստկացնում առաջնային մեղքը: Աշխարհիկ կերպարներից այդպիսիք են, օրինակ, «Անգգամ կինը»¹¹, «Հպարտ կինը»¹² առակների հերոսուհիները:

Իշխանապենչ, ճակատագրական կին. նման գայթակղիչ կերպարները ցույց են տալիս կանացի սեքսուալության վտանգները: Այս կանայք հաճախ իշխանության են հասնում իրենց հրապուրանքի միջոցով, բայց կարող են տղամարդկանց տանել կործանման: Նմանատիպ մի կերպար տեսնում ենք Ստեփանոս Օրբելյանի (մոտ 1250/60–1303) «Սյունիքի պատմության» Ստեփանոս Սյունեցու (660/670–735), կյանքն ու գործը ներկայացնող գլխում. հերատուկ կինն իր հոմանունն ստիպում է սպանել խաղաղորեն նիրհող մետրապոլտին. «սադրէր **քաղցր բանիւք պոռնկութեանն** և քաջալերեալ անդրէն յուղարկէր»¹³ (ընդգծումը մերն է – Ն.Թ.):

Ձոհ. ներկայացնում է տառապանքն ու զոհաբերությունը, որոնք հաճախ տղամարդու գործողությունների կամ հասարակական սահմանափակումների հետևանք են: Այսպիսիք են ողբերգական հերոսուհիները ասպետական սիրավեպերում:

Այս դասակարգում-սահմանազատումը ուղղագիծ կամ միանշանակ չէ. արքետիպերը հաճախ հատվում են և կարող են զարգացման տարբեր կերպեր դրսևորել մի պատումի շրջանակներում, մի կերպարում միաձուլել մեկ կամ մի քանի արքետիպային մոդելների հատկանիշներ՝ արտացոլելով միջնադարյան հասարակության մեջ կանանց սոցիալական դերի կամ դերերի և ինքնության բարդությունները:

Միջնադարյան գրականության կանանց տիպական կերպարները՝ ըստ առաջնային մոդելային համակարգի

Սուրբգրային տեքստերից սնվող գրականության մեջ առաջին և ամենատարածված տիպական կերպարը, բնականաբար, Աստվածամայրն է, Սուրբ կույսը, որ մաքրության, գթասրտության մարմնացում է: Սկզբնական շրջանում, այսինքն՝ վաղ միջնադարյան երկերում այն

¹¹ Նույն տեղում, էջ 136:

¹² Հատընտիր առակք Վարդանայ Վարդապետի, էջ 42:

¹³ Ստեփաննոսի Միւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, տպ. Լազարյան ճեմարանի Արևելեան լեզուաց, 1861, էջ 102:

հանդես է գալիս որպես միայն Հիսուսի՝ Աստծո մայր: Փառաբանվում է միայն որպես այդպիսին. «Ուրախ լեր Մարիամ, Այգի վայելուչ, յորում կամաւորութեամբ Հաւր ճշմարիտ որթն տնկէր»¹⁴, կամ Ժ-ԺԱ դդ հեղինակ Վարդան Անեցին «Վասն կառաց Աստվածաբանութեան» ներբողում ներկայացնում է որպես դշխունի մայր Սիովնի¹⁵: Նկատենք, որ Սիոնը տարբեր խորհրդանշական գործածություններ ունի: Տվյալ դեպքում խոսքը Երուսաղեմի մասին է, որտեղ գտնվում է Սիոն բլուրը, ուր նախկինում Դավթի տաճարն էր: Այստեղ գործածված է քրիստոնյաների հավաքական իմաստով:

Ժամանակի ընթացքում Մարիամի կերպարը զարգանում է, և փոխոխվում է գործառույթը, ինչը երևում է Աստծո մայր լինելուց դեպի առավել ինքնուրույնություն անցումով: Մարիամն ընկալվում է արդեն որպես ոչ միայն հոգևոր՝ ներքին, այլև արտաքին՝ ֆիզիկական գեղեցկության կատարելատիպ: Դրանում համոզվում ենք Գրիգոր Նարեկացու (951-1003) հայտնի «Մեղեդի Ծննդի» տաղն ընթերցելով.

*Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ
Ծառալանայր յառաւօրուն,
Երկու փայլակնաձև արեգական նման.
Շողն ի ժմին իջեալ յառաւօրէ լույս¹⁶:*

Այս ինքնուրույնությունը, սակայն, բացարձակ լինել չէր կարող, քանի որ ամեն ինչ արվում է Աստծո կամքով, և կերպարը ձեռք է բերում բարեխոս լինելու գործառույթը՝ մարեմաբանության սահմաններից դուրս գալով դեպի գրականություն և արվեստ: Ասվածի ամենավառ օրինակը կրկին հանդիպում ենք Գրիգոր Նարեկացու մոտ.

*Բարեխաւսեա՛, խնդրեա՛, աղաչեա՛,
Ձի ըստ անճառելի մաքրութեանդ՝
Եւ ահա զքանիդ հաւատամ զընդունելութիւն (Բան 2, ք)¹⁷:*

¹⁴ Երանելոյն **Պետրոսի Սիւնեաց** եպիսկոպոսի Գովեստ ի Սուրբ Աստուածածինն եւ ի միշտ կոյսն Մարիամ ըստ յորջորջման նորին. եւ ի Սուրբ Գրոց լուծմունք նոցին, հոգևոր իմաստիւք.- Մատենագիրք Հայոց, հ. Գ., էջ 389:

¹⁵ Բանբեր Մատենադարանի, Եր., 1971, էջ 280:

¹⁶ **Հայ միջնադարյան քնարերգություն**, կազմ. և ծանոթագր. Լ. Մկրտչյան, Ա. Մաղոյան, Եր., «Նաիրի» հրատ., 1996, 552 էջ:

Ասպետական, կուրտուազային գրականության մեջ հանդես եկող իդեալական կնոջ և Աստվածամոր կերպարների փոխառնչության վերաբերյալ կան տարբեր կարծիքներ. որոշ հետազոտողներ կարծում են, թե անտարակուսելի փաստ է, որ կնոջ հանդեպ առավել բարեհաճ վերաբերմունքի ավանդույթը կապված է Աստվածամոր պաշտամունքի տարածման հետ¹⁷, իսկ, օրինակ, բրիտանացի գրող և բանասեր Կ. Ս. Լյուիսը այն միտքն է հայտնում, թե միջնադարյան սիրային քնարերգության թվացյալ կրոնական տոնը գալիս է ոչ մարեմապաշտությունից, այլ հակառակը. Աստվածամորը նվիրված որոշ գործեր գրվել են սիրային պոեզիայի նմանողությամբ¹⁹:

Հաջորդ տիպական կերպարը Եվան է, որի առաջին մեղքի պատճառ լինելու հանգամանքը հետին պլան է մղում նախամայր լինելը: Սկզբնական շրջանում նա ընկալվում էր որպես մաքրամաքուր Մարիամի հակոտնյա կերպար, մինչդեռ արդեն Դանտեն (1265–1321) նրան տեսնում է դրախտում՝ Էմպիրեյում, Մարիամի գահից ներքև՝ երկրորդ շարքում՝ ավելի բարձր, քան Բեատրիչեն:

*Այն կինը, որ հաջորդ շարքում է նստած,
Հենց նա է, որ մարդկության մեջ վերք բացավ,
Որը հեղու բուժեց Մարիամը գթած:*

*Նրանից ցած՝ երրորդ շարքի գահույքին,
Հռաքելն է նստած, ինչպես տեսնում ես,
Բեատրիչեն ունենալով իր կողքին (Դրախտ, երգ 32)²⁰:*

Իսկ Դանտեից շատ առաջ Գրիգոր Նարեկացին, դիմելով Աստվածամորը, ասում է.

*Արասցես տաւն ինձ բերկրութեան զաւրն իմ տազնապի,
Ողջացուցիչ երկանցն Եւայի (Բան 2, բ)²¹:*

¹⁷ **Գրիգոր Նարեկացի**, Մատենանոց տպագրության, աշխատասիր. Պ. Խաչատրյան, Ա. Ղազինյան, Եր., Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1985, էջ 571:

¹⁸ Տե՛ս, օրինակ, **Рябова Т.**, Женщина в истории западноевропейского средневековья, Иваново, издательский центр «Юнона», 1999, с. 19.

¹⁹ **Льюис К.**, Избранные работы по истории культуры, сост., пер. с англ. и коммент. Н. Эппле, М., изд.-во «Новое литературное обозрение», 2015, 928 с.

²⁰ **Դանտե**, Աստվածային կատակերգություն, էջ 489:

²¹ **Գրիգոր Նարեկացի**. Մատենանոց տպագրության, էջ 571:

Կերպարի այսօրինակ ընկալումը ցույց է տալիս, այսպես կոչված, ռեաբիլիտացիան: Մեղսաթող Եվային տեսնում ենք նաև Զովանի Բոկաչոյի (1313–1375) մոտ, որն իր լատիներենով գրած «Նշանավոր կանայք» (1361թ.) գործը սկսում է նախամայր Եվայով²²:

Բոկաչոյի ավագ հայրենակիցը Դանտեն կանանց նկատմամբ իր վերաբերմունքն արտահայտել է նրանց զետեղելով իր գլխավոր ստեղծագործության համապատասխան տեղիներում, ինչպես վերը նկատեցինք: Կանանց կերպարներից առաջինները, որ հանդիպում ենք «Աստվածային կատակերգության» մեջ Բեատրիչեն, Մարիամը, Լուչիան ու Հռաքելն են²³: Մարիամը Լուչիային ուղարկում է Բեատրիչեի մոտ, որը Հռաքելի հետ նստած էր: Ինչու՞ է հենց Լուչիային ուղարկում, և ինչու՞ է Բեատրիչեն Հռաքելի հետ, ո՞վ է Լուչիան, ո՞վ է Հռաքելը: Այսպես. Լուչիան կույրերի հովանավորն է: Այս կերպ Դանտեն ակնարկում է, որ Բեատրիչեն պետք է աչքերը բացի և տեսնի իր սերը: Հռաքելը հինկտակարանյան Հակոբի հավիտենական սերն է: Այսկերպ Դանտեն զուգահեռներ է անցկացնում իր և Հակոբի միջև. երկուսն էլ ամուսնացած էին, բայց սիրում էին ուրիշի, որին սիրել են մինչև ամուսնությունը և ընթացքում: Ի դեպ՝ Հակոբի կինը՝ Լիան, որ Հռաքելի քույրն է, կույր է: Հռաքելին հանդիպում ենք նաև Գրիգոր Մագիստրոս Պահլավունու մոտ²⁴: Ինչպես հայտնի է, Գրիգոր Մագիստրոսի գործերում հաճախ

²² **Տե՛ս** Джованні Боккаччо. Про славних жінок, переклад з латинської, Хаків, **Фолио**, 2014, с. 15.

Հետաքրքիր երևույթ է նկատվում այս գործի հետ կապված: Հեղինակը 106 կանանց մասին է գրել, գիրքն այնքան մեծ ճանաչում է ձեռք բերել որ հետագայում ավելացվել են ուրիշ կանանց կենսագրություններ ևս: Կենսագրություն-նովելների այս ժողովածուն հիմք է տալիս որոշ ուսումնասիրողների (կարիք չենք տեսնում այստեղ անուններ նշելու՝ ավելորդ անգամ չգովազդելու համար) համոզվածություն հայտնելու, թե Բոկաչոն առաջին նախաֆեմինիստներից է, եթե ոչ առաջինը: Սակայն պետք է նշել, որ նույն Բոկաչոն ունի քիչ հայտնի մի այլ գործ՝ Corbaccio o Laberinto d'amore «Ագռավը կամ սիրո լաբիրինթոսը» (Джованни Боккаччо. Ворон. Ленинград, «Художественная литература», Ленинградское отделение, 1975), ուր ներկայացնում է կնոջ ամենավատ որակները և, դրանք ընդհանրացնելով, տարածում բոլոր կանանց վրա: Բոկաչոյին նախաֆեմինիստ հռչակողները կամ տեղյակ չեն այս պամֆլետից, կամ ընտրողաբար են մոտենում հարցին: Երկու դեպքում էլ, բնականաբար, հնարավոր չէ ամբողջական օրյեկտիվ պատկեր ունենալ:

²³ **Դանտե**, Աստվածային կատակերգություն, էջք 12–14:

²⁴ Տե՛ս Տաղասացութիւն ներիումն առն **Գրիգորի Մագիստրոսի** ուղղափառ իշխանի, Կոստանդնուպոլիս, 1825, էջ 22: Անշուշտ այս երկում աստվածաշնչյան բոլոր

ենք հանդիպում հունական դիցաբանության կերպարների, որոնց նկատմամբ անհատական մոտեցում ունի, երբեմն համեմատում, հակադրում է աստվածաշնչյան կերպարների հետ. «Այսքար բոզն այն Ափռողիս փրկիչին հանդերձ արբն Պիսիդոնի առ մեզ ի դաշտիս Մամիկոնեան ներգործեաց, որ և ապականեաց վաւաշ բորբորիտոն գիջամոլի պոռնիկն, եւ ոչ կարացաք հասանել իբրոյ զԱհարոնեան Մարիամ ի ծովածուփ ծփանաց եզրակացութեամբ պարել մերձ առ քեզ զնոր արհնութիւնս» (ԻԳ)²⁵: Այստեղ նկատի ունի Մովսեսի և Ահարոնի քույր Մարիամին, որը թմբկահարող և պարող կանանց խմբին էր առաջնորդում՝ փառաբանելով Աստծուն, երբ Մովսեսը Կարմիր ծովի ալիքները հեռացնելով իր ժողովրդին ցամաքով անցկացնում էր դեպի անապատ (տե՛ս Ել., ԺԵ, 19–22):

Պարող կանանց պատկերային մոտիվը տարածված էր միջնադարում, հիշենք «Աստվածային կատակերգության» Քավարանում գրիֆոնի աջ կողքին պարող կանանց²⁶:

Բեատրիչեի կերպարը համաշխարհային գրականության մեջ ամենահայտնիներից է և բավականին ուսումնասիրված: Կատակերգության մեջ Բեատրիչեն մաքրության, սրբության, առաքինության և մնացած այլ դրական ու աստվածային որակների մարմնացում է: Բայց Բեատրիչեն նաև իմաստուն կին է. Վերգիլիոսին հարցին, թե ինչու՞ չի վախեցել երկնքից դժոխք իջնել, պատասխանում է.

*Պետք է միայն այն բաներից վախենալ,
Որ կարող են թաքուն վնաս հասցընել,
Մյուսներից երկյուղ պետք չէ ունենալ* (Դրախտ, երգ 2)²⁷:

Այստեղ տեսնում ենք կույսի և իմաստուն կնոջ արքետիպերի հատումը նույն կերպարում: Դանտեն նրան բարձրացնում է գրեթե Աստվածամոր՝ արքետիպային առաջին կույսի աստիճանին: Կա նաև այսպիսի մի տեսակետ, երբ Բեատրիչեի կերպարը համեմատվում է

հիմնական կերպարները երևում են, քանի որ այն, ինչպես գիտենք, նույն Աստվածաշնչի չափածո տարբերակն է:

²⁵ **Գրիգոր Մագիստրոսի** Թղթերը, բնագիրն յառաջաբանով և ծանոթություններով առաջին անգամ ի լոյս ընծայեաց Կ. Կոստանեանց, Աղեքսանդրապոլ, տպ. Գեորգ Սանոյեանի, 1910, էջ 70:

²⁶ Տե՛ս **Դանտե**, Աստվածային կատակերգություն, էջ 313:

²⁷ Նույն տեղում, էջ 13:

Հիսուսի կերպարի հետև և վստահեցվում, որ Բեատրիչեն Հիսուսի կին անալոգն է²⁸: Փաստարկներից ամենահիմնավորն այն է, որ Բեատրիչեն իր աղոթքներով օգնում է Դանտեին կամ Դանտեի լիրիկական հերոսին դուրս գալ մեղսավոր մոլորությունից, նույնիսկ իջնում է դժոխք՝ նրան դրախտ բարձրացնելու համար: Ավելին՝ համարում է, որ նույնիսկ Հիսուսը ծառայում է Բեատրիչեին և որպես հիմնավորում բերում է Քավարանի միստիկական թափորի օրինակը, երբ Բեատրիչեին տանող երկանվին լծված է ոսկիրան գրիֆոնը²⁹: Ահա այս գրիֆոնին համարում է Հիսուսի խորհրդանշը: Բայց այստեղ կա մի նուրբ պահ. գրիֆոնը քրիստոնեական գրականության մեջ կարող է խորհրդանշել աստվածային ուժը, բայց ոչ Աստծուն: Եթե Բեատրիչեն, որ անդադրում աղոթում է Դանտեի մեղքերի թողության համար, Հիսուսի կին անալոգն է, այսինքն ինքն էլ աստված է, ապա այնպիսի անկեղծ հարց է ծագում, ինչպիսին ժամանակին Եզնիկ Կողբացին տվել է իր Պարսից կրոնի հերքման մեջ. ու՞մ է աղոթում³⁰:

Բեատրիչեն աստվածային սիրո, իմաստության և հայտնության, ճշմարտության, քրիստոնեության և քրիստոնեական եկեղեցու, աստվածաբանության և սխոլաստիկայի անձնավորումն է: Ընդհանրապես «Աստվածային կատակերգության» կերպարները կամ գործող անձինք իրական մարդիկ են՝ ժամանակակից կամեոյի էֆեկտի նախատիպը:

Դժոխքի երկրորդ ոլորանում Դանտեն հանդիպում է Ֆրանչեսկա դա Ռիմինիին, որը պատմում է իր ողբերգական, արգելված սիրո մասին: Պաուլոյի և Ֆրանչեսկայի միջև սերը բռնկվել է, երբ համատեղ ընթերցում էին Լանցելոտի և Գվինևերի սիրո պատմությունը: Դանտեն զուգահեռ է անցկացնում Ֆրանչեսկա – Պաուլո և Գվինևեր – Լանցելոտ սիրավեպերի մեջ, վերջինիս հետ կարելի է զուգահեռել նաև Տրիստանի և Իզոլդայի սիրո մասին պատմող վեպը, որը գրվել է հավանա-

²⁸ **Кравченко А.**, Женский аналог Христа: образ Беатриче в «Божественной комедии». - «Человек, образ, слово в контексте исторического времени и пространства»: Материалы Всероссийской научно-практической конференции, 23–24 апреля 2015 года / отв. ред. И. Эрлихсон, Ю. Лосев; Рязанский государственный университет имени С.А. Есенина, Рязань, изд.-во «Концепция», 2015, с. 52–54.

²⁹ **Դանտե**, Աստվածային կատակերգություն, էջ 313:

³⁰ «Եթե ասիցեն, եթե կատարեալ էր, լուիցեն, եթե կատարեալն լումէ՞ կարաւտանայր խնդրել որդի» (**Եզնիկ Կողբացի**. Եղծ աղանդոց.- Մատենագիրք Հայոց, հ Ա, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 463):

բար 1230–40ին, Արթուր թագավորի արքունիքում, իսկ սյուժեն հայտնի էր դեռևս Ե–Չ դդ. Իռլանդիայում և Շոտլանդիայում: Ֆրանչեսկան մեղավոր կնոջ և զոհի արքետիպերի հատկանիշների կրողն է:

Ինչպես տեսնում ենք այս կերպարային դրսևորումները խորքային շերտեր ունեն:

Ընդհանրապես միջնադարյան պատմագրության մեջ (ձեռագիր հիշատակարանները ներառյալ) հանդես եկող կանայք ավելի շատ գործող անձինք են, քան գեղարվեստական կերպարներ: Պատմագրական երկերում ավելի շատ խոսվում է արքայական տոհմի և ազնվական կանանց մասին: Կեռան թագուհին (մահ. 1285) խելացի, բարեպաշտ մայր է և թագուհի, նրա 16 զավակներից 5-ը եղել են Հայոց գահակալներ: «Երիցս երանեալ», «բարեգարդահոյս», «սուրբ թագուհիներին թագակից և պսակակից» և այլ մակդիրներով է որակվում տիկին Աննա Հայոց թագուհին³¹:

Հետաքրքիր կերպար է Ալիոնորա Ակվիտանացի թագուհին՝ Ռիչարդ Առյուծասիրտ թագավորի մայրը, նրա մասին պատմում են, որ թշնամու ուշադրությունը շեղելու և իր զորքին օգնելու նպատակով ցուցադրել է մերկ կուրծքը:

Խաչակիրների միջոցով հնարավոր եղան փոխազդեցություններ Հայաստանի՝ հիմնականում Կիլիկյան Հայաստանի և Եվրոպական մշակույթի միջև: Մինչ մեզանում զարգանում էին հոգևոր գրականությունը, պատմագրությունը, Եվրոպայում ձևավորվում ու զարգանում էր նաև կուրտուազային գրականությունը: Ահա այստեղ կնոջ կերպարը հանդես էր գալիս որպես սիրո ու տենչանքի առարկա: Չի բացառվում, որ Հայաստանում ևս ստեղծվել է նման գրականություն, սակայն չի էլ հաստատվում, քանի որ մեզ չի հասել գրավոր վկայությամբ:

Փոխաբերությունը որպես միջնադարում ընդունված պարկերավորման հնարք

Միջնադարյան գրականությանը խիստ հատուկ է փոխաբերական պատկերների կիրառումը, ինչը լեզվատիմացվում էր տեսիլքի, երազի հնարքի միջոցով: Մեզանում տարածված էր վարդի և սոխակի այլաբանությունը: Եվրոպայում նույնպես վարդը կնոջ, կնոջ հանդեպ սի-

³¹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյանը, Եր., Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 1984, էջ 415–418:

րո խորհրդանիշն ու այլաբանությունն է: Հիշենք հայտնի «Վարդի սիրավեպը»: Սա համարվում է միջնադարյան ամենաազդեցիկ վեպը՝ Գիյոմ դը Լորիս և Ժան դը Մյոն հեղինակներով: Փոխաբերությունն այստեղ հանդես է գալիս և դիմառնաբար, երբ մարդկային առաքինություններն ու տարատեսակ հատկությունները անձնավորվում են, և հակառակը՝ կինը, կնոջ նկատմամբ սերը այլաբերվում են խորհրդանշով, տվյալ դեպքում վարդով: Ռուսերեն հրատարակության առաջաբան-ուսումնասիրության մեջ թարգմանիչը համառոտակի նշում է այն երեք հեղինակներին, որոնց գործերը մեծապես ազդել են միջնադարյան այլաբանության ձևավորման և զարգացման վրա. Ավրելիոս Պրուդենցիոս Կլեմենսը (348–405) իր «Փսիխոմախիա» պոեմով, Մարցիանուս Կապելան (360–428) և թերևս առավել ազդեցիկը՝ Բոեցիուսը (480–524)³²: Բացի այս, ԺԲ դարի այլաբանական գրականության մեկ այլ ներկայացուցիչ, որը մեծապես ազդել է հենց «Վարդի սիրավեպի» վրա Ալեն դը Լիլն է: Այս վեպի դեմ աշխատանք է գրել Քրիստին Պիզանցին, «Առ սիրո աստված Ամուրը»³³, որով սկիզբ է դրել այսպես կոչված Վարդի շուրջ բանավեճին: Նա չի ընդունում, երբ գրականության մեջ կինը ներկայանում է սոսկ որպես պասիվ սուբյեկտ, մրցանակ հաղթողին, ինչպես ասպետական գրականության մեջ: Իր երկերով, ինչպիսին է, ասենք, «Գիրք Կանանց քաղաքի մասին»³⁴, որտեղ նույնպես մարդկային հատկանիշներն ու երևույթները անձնավորված են (Արդարություն, Առաքինություն, Բանականություն), փորձում է գենդերային կարծրատիպեր կոտրել, ցույց տալով, որ կանայք բացի գեղեցիկ լինելուց նաև խելացի են, ինքնուրույն, ընդունակ են որոշումներ կայացնելու: Նկատենք, որ այս քաղաքում ապրում են միայն հոգևոր բարձր արժանիքներով օժտված կանայք:

Այլաբանական գրականության վերոհիշյալ հայրերի գործերը, բնականաբար, քաջաձանոթ էին ողջ քրիստոնյա աշխարհում, այդ թվում՝ Հայաստանում: Միջնադարի գրականության մեջ տիրապետող

³² Гильом де Лоррис, Жан де Мён, Роман о Розе, с. 14–15.

³³ Poems of Cupid, Cod of Love. **Christine de Pizan's** Epistre au dieu d'Amours and Dit de la Rose, Thomas Hocclew's The Letter of Cupid, editions and translations with George Sewell's The Proclamation of Cupid, edited by Th. S. Fenster, M. Carpenter Erler, Leiden, New York, København, Köln, E.J. Brill, 1990, p. 10.

³⁴ **Christine de Pizan**, The Book of the City of Ladies, trans. By E.J. Richards, New York, Persea Books, 1982, 340 p.

պատկերավորման տիպական այս արտահայտումը առկա է նաև հայ գրական միջավայրում. հիշենք Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» պոեմը, (Զանգի ամիրայի կողմից քաղաքի գրավման առիթով գրված), որտեղ քաղաքը այլաբերվում է այրի կնոջ: Հենց վերնագրում ասվում է ստեղծագործության փոխաբերության գործոնի մասին. «Բան բարառնական, տաղիւ չափեալ հոմերական, խօսեալ բանիւ ողբերգական, վասն եդեսիայ մեծի առման ի թուականի հինգհարիւրի եւ իննսուն ընդ երեքի (1144 – Ն.Թ), քսան եւ երեք դէկտեմբերի, երրորդ ժամու, յօր շաբաթի»³⁵: 1299ին Ստեփանոս Օրբելյանը գրում է «Ողբ ի դիմաց Ս. Կաթողիկէին» պոեմ-բանաստեղծությունը, ուր լքված մոր ու հարսի կերպար է վերագրում Ս. Կաթողիկէին: Վերնագրի առաջին մասը կրկնում է Ներսես Շնորհալու երկի վերնագիրը. «Բան բարառնական ոգեալ դիմառնաբար ի դիմաց Վաղարշապատու սուրբ Կաթողիկէին. Ողբ աւաղականք եւ ծայն աշխարականք լեալ անհուն հեծեծանաւք վասն աւերման աշխարհիս հայոց եւ բնաւին սպառելոյ հայրապետութեանն եւ թագաւորութեանն համագունդ իշխանութեան, շարեալ չափաբան բերմամբ հոմերական արհեստիւ ի Ստեփաննոսէ Սինեաց այցելուէ, ի խնդրոյ շնորհազարդ վարդապետի Խաչատրոյ Կեչառեցի»³⁶: Այստեղից երևում է, որ նման բարառնական ոգումը գրական սովորույթ էր:

Վարդի և սոխակի՝ բլբուլի այլաբանությանը հայ իրականության մեջ առաջին անգամ հանդիպում ենք Կոստանդին Երզնկացու (1250–1314/1328) տաղերում.

*Բլբուլն լար ողորմաբար,
Աղաղակէ քաղցրաբարբառ,
Ասէ թէ՛ ի՞նչ եղել պատճառ,
Վա՛րդ, որ զերեսըտ չես բացել:*

*Վարդն ասէ. Չէ՛ դեռ ժամանակ,
Ինձ բազմելոյ ի հրապարակ,*

³⁵ Ներսես Շնորհալի, Ողբ Եդեսիոյ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, 157 էջ:

³⁶ Ստեփաննոս Օրբելեանի Ողբ ի Ս. Կաթողիկէն, բանգիրը յառաջաբանով եւ ծանոթութիւններով հրատարակեց Կ. Կոստանեանց, Թիֆլիս, տպ. Մովսիսի Վարդանեան, 1885, էջ 53: Ա. Դոլուխանյանը յոթ գրչագիր և մեկ տպագիր օրինակների հիման վրա կազմել է «Տեառն Ստեփաննոսի քերթվածիս համեմատական բնագիրը. տե՛ս Խաչատուր Կեչառեցի, Տաղեր, աշխատասիրությամբ Ա. Դոլուխանյանի, Եր., 1988, էջ 82:

*Յերկիր եկել չեմ համարձակ,
Վասն այն յայտնի չեմ ես կացել³⁷:*

Արևելյան, մասնավորապես պարսկական պոեզիայում վարդի և բլբուլի սիրային մոտիվի ամենավաղ մշակումը վերագրվում է ԺԲ բանաստեղծ Ֆարիդ ադ-ին Աթթարին (1145–1221)³⁸: Ստացվում է, որ և՛ Եվրոպայում, և՛ Արևելքում, և՛ նրանց կապող օղակ հանդիսացող Հայաստանում գրեթե միաժամանակ ձևավորվում է գրական նույն ճաշակով թելադրված ստեղծագործական մոտիվը:

Անձնավորման հետաքրքիր դրսևորում տեսնում ենք նաև Եվրոպական գրական միջավայրում, որտեղ բանասիրությունը՝ ֆիլոլոգիան, փոխաբերվում էր կնոջ. վառ օրինակը Գիյոմ Բուդեի (1467–1540) «Արքայազնի ուսուցումը» երկն է, որի ձեռագրի (Փարիզի ազգային գրադարան, Ms-5103) 1բ էջում կա շքեղ մի մանրանկար, ուր պատկերված են Մերկուրիուսը և Ֆիլոլոգիան: Ֆիլոլոգիա բառը և հունարենում, և լատիներենում, և ֆրանսերենում քերականական իգական սեռի գոյական է, ուստի տրամաբանական է կնոջ կերպավորումը: Մերկուրիուսի և Ֆիլոլոգիայի համատեղ հանդես գալը միջնադարյան Եվրոպայում ընդունված երևույթ էր, որին գրավոր անմահություն է հաղորդել վերը արդեն հիշատակված Մարցիանուս Կապելան: Գործը մեզ է հասել մի քանի անուններով. «Սատիրիկոն», «Յոթ ազատ արվեստներ», «Ֆիլոլոգիայի և Մերկուրիուսի ամուսնության մասին»³⁹ և այլն:

Ֆիլոլոգիան գիտելիքի մարմնական, ֆիզիկական դրսևորումն է, որը պետք է ձեռք բերի բանական հոգին, եթե ցանկանում է միավորվել Աստվածային մտքի հետ՝ արտահայտված Մերկուրիուսի կերպարով: Ինչպես գիտենք, Մերկուրիուսը, հունական տարբերակով Հերմեսը, ժամանակակից լեզվով ասած՝ տեղեկատվության, տվյալագիտության և բիզնեսի հովանավոր աստվածն է:

Աշխատությունը բաղկացած է ինը գրքից, որոնցից վերջին յոթը վերնագրված են արվեստների անուններով. Գրամատիկա, Դիալեկտի-

³⁷ Հայ միջնադարյան քնարեգություն, էջ 226:

³⁸ Տե՛ս **Աղաբաբյան Վ.**, Վարդի և սոխակի այլաբանության մոտիվը հայ միջնադարյան քնարեգության մեջ, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2009, №2, էջ 3:

³⁹ **Капелла М.**, Бракосочетание Филологии и Меркурия, М.; СПб., Центр гуманитарных инициатив, изд.-во «Петроглиф», 2019, 400 с.

կա, Հռետորիկա, Գեոմետրիա, Արիթմետիկա, Աստրոնոմիա, Հարմոնիա⁴⁰:

Բանասիրություն / ֆիլոլոգիա հասկացության նույն, անփոփոխ ծավալի դեպքում հնում բովանդակությունը շատ ավելի լայն էր, և բանասեր էր համարվում գիր-գրականությամբ, բառուբանով զբաղվող անհատը: Եվ քանի որ գրականությունը զարգանում էր հոգևոր կենտրոններում, ուստի բանասիրությունը սերն էր առ աստվածային բանը: Դրա վկայություններին հանդիպում ենք և Եվրոպական, ինչպես արդեն տեսանք, և հայկական աղբյուրներում.

«...ի խնդրոյ բանասիրաց ոմանց» (Մաշտոցյան Մատենադարան, այսուհետ՝ ՄՄ, ձեռ. Հ^մ 57, ԺԵ դ.),

«...վերջինս բանասիրաց,...» (ՄՄ, ձեռ. Հ^մ 115, 1379 թ.),

«...ի վայելումն դեռաբոյս եւ նորահասակ ուսումնականի եւ բանասիրի՝ Բարսեղ սարկաւազի, Ի թվին ՊԻԹ (1380)» (ՄՄ, ձեռ. 5 Հ^մ 73) ևն:

Գենդերային կարծրապիպերը միջնադարյան գրական երկերում

Ինչպես հայտնի է գրական ստեղծագործությունները արտացոլում են միջավայրը, որի ծնունդ են, և այդ միջավայրի իրականություններն ու մշակույթը:

Ինչպես վերը ասվեց, կանանց կերպարները և ընդհանրապես ցանկացած կերպար, ստեղծվում են ըստ իրական նախատիպի կամ արքետիպի:

Գրականության մեջ արտացոլված նաև գենդերային կարծրատիպերը հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու հասարակության մեջ գործող բարոյական նորմերի, սոցիալական վարքի, ավանդույթների ու սովորույթների մասին՝ իհարկե նկատի ունենալով գեղարվեստականության տոկոսը: Այստեղ տեղին է հիշել հ. Վ. վրդ. Հացունու գործը, որտեղ հայ մատենագրության տվյալների համադրումով վեր է հանած հայ կնոջ՝ ազնվական և ռամիկ դասակարգերի

⁴⁰ Սանդրո Բոտիչելլին «Երիտասարդ Լորենցո Տորնաբուոնիի ուսումնառությունը» ևս պատկերել է անձնառնաբար: Տիկին Գրամատիկան երիտասարդին ներկայացնում է անձնավորված արվեստներին: Ըստ որում արվեստների տեսակները կարող են տարբեր լինել:

պատմությունը. «իսկապէս ուշագրաւ ու պատկառելի է հին հայ կնոջ պատկերը»⁴¹:

Կինը հանդես է գալիս հիմնականում տղամարդու հետ, տղամարդու կողքին, տղամարդուն ներդաշնակ, սակայն միշտ չէ, որ հավասար, ընդհակառակը հիմնականում նրանից ցածր: Հայ իրականության մեջ տեսնում ենք Ստեփանոս Սյունեցու քույր, Սահակդուխտ կամ Սահակադուխտ սարկավագուհուն, որը երաժիշտ, բանաստեղծ էր, բայց մարդկանց հետ շփվում էր վարագույրի հետևից՝ ըստ տիրող բարքերի: Մինչև այսօր էլ կանայք մեզանում եկեղեցու բեմ չեն կարող բարձրանալ, հոգևոր բարձր պաշտոններ չեն կարող զբաղեցնել ըստ գենդերային հատկանիշների: Վերը արդեն հիշատակված «Անզգամ կինը» առակի հերոսուհին ասում է. «...ամեն օր այսպես ծեծիր, միայն ինձ դուրս մի անի և քեզնից մի հեռացրու, որպեսզի աշխարհում խաղք չլինեմ»⁴²: Տղամարդու հովանավորությունից զուրկ կնոջ անլիարժեքության ընկալումը հասարակության կողմից, այդ նույն հասարակության կարծիքի կարևորությունն ու կենսական նշանակությունը այսօր էլ մնում է գրականության հիմնական թեմատիկաներից մեկը, քանի որ երևույթը դեռևս շարունակում է գոյատևել տարբեր տարածաշրջաններում տարբեր չափերով, այդ թվում՝ Հայաստանում:

Եզրակացություններ

ԺԱ–ԺԴ դարերի հայ գրականությունը առավել շատ աղերսներ ունի բուզանդական քան արևմտաեվրոպական գրականության հետ: Երկու դեպքում էլ (հայ-եվրոպական և հայ-բյուզանդական) մեզ հետաքրքրող հարթույթում՝ կանանց կերպարային դրսևորումները տեսնում ենք հոգևոր գրականության, պատմագրության-ժամանակագրության, կրոնաբանահյուսական ժանրերում:

Այս ժամանակաշրջանը հիմք դրեց գրականության հետագա զարգացումների համար՝ հանգեցնելով Վերածննդի՝ ավելի քննադատական և աշխարհիկ մոտեցումների:

Ժամանակի գրական շատ տարածված հնարք էր փոխաբերությունը՝ հատկապես դիմառնությունը, անձավորումը, որ հնարավորութ

⁴¹ Հ. Վ. վրդ. Հացունի. Հայուհին պատմութեան առջև, Վենետիկ, Ս. Ղազար, 1936, էջ 6:

⁴² Հատընտիր առակք Վարդանայ Վարդապետի, էջ 137:

յուն էր տալիս առավել առարկայական դարձնել ընթերցողին ուղղված խոսքը:

Այս դարերի գրականության կին կերպարները հաճախ բնորոշվում էին ժամանակի սոցիալական և կրոնական համատեքստով: Նրանք տատանվում էին պալատական սիրո իդեալականացված կերպարներից (Եվրոպա), հզոր թագուհիներից, առեղծվածային կախարհուհիներից և սրբերից (Եվրոպա) մինչև ավելի բարդ կերպարներ, որոնք երևում էին ավելի ուշ ստեղծագործություններում: Որոշ կին կերպարներ ցուցաբերում են նշանակալի ուժ, ինքնուրույնություն կամ ազդեցություն՝ ծառայելով միջնադարյան հասարակության մեջ կանանց սահմանափակ և զարգացող դերերի բարձրացմանը:

НАИРА ТАМАМЯН

Кандидат филологических наук

ПРОЯВЛЕНИЯ ОБРАЗА ЖЕНЩИН В АРМЯНСКОЙ И ЕВРОПЕЙСКОЙ ЛИТЕРАТУРЕ (XI–XIV ВВ.)

Резюме

Женские образы в европейской и армянской литературных культурах формировались преимущественно под влиянием библейских систем и выражают реалии, социальные, общественные и моральные нормы того времени. В отличие от европейской литературы, в армянской литературе отсутствуют рыцарские романы, что было обусловлено иными социальными и историческими обстоятельствами. Женские персонажи можно условно сгруппировать по архетипам (дева, мать, верная жена, мудрая женщина, героическая женщина, обманщица, грешница, жертва, роковая женщина), характеристики которых могут сочетаться в одном проявлении характера.

Аллегория была очень популярным стилистическим приемом в средние века, проявлявшимся не только в метафоре лиц и предметов, но и в персонификации явлений и свойств человека.

Из сопоставления-сравнения-рассмотрения становится ясно, что армянская литература XI–XIV веков имеет больше сходства с византийской литературой, чем с западноевропейской.

Ключевые слова: *первичная модель, средневековье, европейская литература, гендерный стереотип, архетип, Дева Мария, Беатриче.*

NAIRA TAMAMYAN

Candidate of Philological Sciences

MANIFESTATIONS OF THE CHARACTERS OF WOMEN IN ARMENIAN AND EUROPEAN LITERATURE (11th–14th CENTURIES)

Abstract

Women's images in European and Armenian literary cultures were formed mainly under the influence of biblical systems and express the realities, social, social and moral norms of the time. Unlike European literature, Armenian literature lacks chivalric novels, which was conditioned by other social and historical circumstances. Female characters can be conditionally grouped by archetypes (maiden, mother, faithful wife, wise woman, heroic woman, deceiver, sinner, victim, femme fatale), the characteristics of which can be combined in one manifestation of character.

Allegory was a very popular stylistic device in the Middle Ages, manifested not only in the metaphor of persons and objects, but also in the personification of phenomena and human properties.

From the comparison-comparison-consideration it becomes clear that Armenian literature of XI–XIV centuries have more similarities with Byzantine literature than with Western European literature.

Keywords: *primary model, Middle Ages, European literature, gender stereotype, archetype, Virgin Mary, Beatrice.*